ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԸՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ARMSWISSBANK
PRIVATE & INVESTMENT BANKING



# ՏԱՐԵԿԱՆ **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

# ANNUAL **REPORT**

2021

WWW.ARMSWISSBANK.AM

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԸՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ARMSWISSBANK
PRIVATE & INVESTMENT BANKING



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
# CONTENTS


ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ
MESSAGE OF THE BANK'S EXECUTIVE DIRECTOR — 4

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ
KEY INDICATORS AND ACHIEVEMENTS — 10

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ
CLIENTS — 12

ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ
LENDING — 14

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
INVESTMENT ACTIVITIES — 26

ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ
FUND ATTRACTION — 32

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
FINANCIAL INDICATORS — 40

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ
STAFF DEVELOPMENT — 46

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
INFORMATION TECHNOLOGIES — 50

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
RISK MANAGEMENT SYSTEM — 53

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ
SOCIAL RESPONSIBILITY — 56

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
FINANCIAL STATEMENTS — 62

ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ
USEFUL INFORMATION ABOUT BANK — 92

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԸՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ARMSWISSBANK
PRIVATE & INVESTMENT BANKING



**ԳԵՎՈՐԳ ՄԱՉԱՆՅԱՆ, Տ.Գ.Թ.**

ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ,
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

**DR. GEVORG MACHANYAN**

CHAIRMAN OF THE MANAGEMENT BOARD,
EXECUTIVE DIRECTOR

# ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

# MESSAGE OF THE BANK'S EXECUTIVE DIRECTOR

***Հարգելի հաճախորդներ, գործընկերներ, աշխատակիցներ և բաժնետերեր***

Բանկի համար 2021 թվականը ֆինանսական արդյունքների և բանկային համակարգում մրցակցային դիրքի ամրապնդման առումով եղել է հաջողակ տարի:

ՀՀ տնտեսությունը 2021թ-ին վերականգնեց աճի միտումները և գրանցեց շուրջ 5.7% տնտեսական աճ՝ չնայած այն հանգամանքին, որ Արցախյան 44-օրյա պատերազմի և կորոնավիրուսի համավարակի հետևանքով տարեսկզբին ձևավորված էր տնտեսական բարդ և անկայուն միջավայր: Տարեվերջի դրությամբ 2020թ-ի վերջի համեմատ ՀՀ դրամն արժևորվել է շուրջ 8.1%-ով: Գնաճի տեմպը եղել է բարձր և կազմել 7.2%, որի ուղղությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից վարվել է կոշտ դրամավարկային քաղաքականություն: Արդյունքում վերաֆինանսավորման տոկոսադրույքը տարեսկզբին սահմանված 5.25%-ից տարեվերջին դարձավ 7.75%: Այս ամենը, անշուշտ, իր ազդեցությունն է ունեցել ՀՀ բանկային համակարգի, այդ թվում՝ Բանկի գործունեության և արձանագրած ցուցանիշների վրա:

***Dear customers, partners, employees and shareholders***

The year of 2021 was successful for the Bank in terms of financial results and strengthening its competitive position in the banking system.

In 2021, the Armenian economy restored growth trends and registered about 5.7% economic growth, despite the fact that the 44-day war in Artsakh as well as the coronavirus, created difficult and unstable economic environment at the beginning of the year. As compared to the end of 2020, the Armenian dram depreciated by about 8.1% at the end of the year. The inflation rate was high ending up with 7.2% which made the Central Bank of Armenia pursue a strict monetary policy. As a result the refinancing rate raised from 5.25% (defined at the beginning of the year) to 7.75% at the end of the year. All this, of course,had an impact on the banking system of the Republic of Armenia including the Bank's activities and indicators.

Անդրադառնալով Բանկի գործունեությանը՝ անհրաժեշտ է արձանագրել, որ 2021թ-ին Բանկն ապահովել է շուրջ 7.8 մլրդ ՀՀ դրամի չափով զուտ շահույթ, ինչը գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը շուրջ 29%-ով: Գործող 17 առևտրային բանկերի շարքում Բանկը շահույթի մեծությամբ զբաղեցրել է 5-րդ տեղը՝ ապահովելով ՀՀ բանկային համակարգի ընդհանուր շահույթի շուրջ 13.2%-ը:

2021թ-ի գործունեության արդյունքներով Բանկը ՀՀ բանկային համակարգում շարունակել է պահպանել իր առաջատար դիրքերը ROA և ROE, ինչպես նաև մեկ աշխատողին բաժին ընկնող հասույթի ու զուտ շահույթի ցուցանիշների գծով:

Առևտրի ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում 2021թ-ի իր ակտիվ գործունեության արդյունքում Բանկը Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) կողմից չորրորդ տարին անընդմեջ արժանացավ **«Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում»** պատվավոր մրցանակին: Ավելին, 2021թ-ին ՎԶԵԲ-ը Բանկի համար առևտրի ֆինանսավորման սահմանաչափն ավելացրել է ևս 6.5 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ հասցնելով 28.5 մլն ԱՄՆ դոլարի, որը ներկայումս ՀՀ բանկային համակարգում ամենամեծ սահմանաչափերից մեկն է:

Միաժամանակ, Բանկն Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) կողմից արժանացել է առևտրի ֆինանսավորման ոլորտում 2021թ-ի **«Հայաստանում առաջատար գործընկեր բանկ»** մրցանակին: 2021թ-ին ԱԶԲ-ն Բանկի համար առևտրի ֆինանսավորման սահմանաչափն ավելացրել է ևս 4 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ հասցնելով 9 մլն ԱՄՆ դոլարի:

As for the Bank's activities it should be noted that in 2021 the Bank had a net profit of about AMD 7.8 billion which exceeds the same indicator by almost 29% compared to the previous year. The Bank was 5th among the 17 commercial banks in terms of profit comprising over 13.2% of the total profit of the Armenian banking system.

Following the results of the activities in 2021 the Bank continued to maintain its leading position in the banking system of the Republic of Armenia in terms of ROA and ROE, as well as in terms of income and profit per employee.

As a result of its active and continuous involvement in the trade financing programs in 2021 the Bank was awarded **"The Most Active Issuing Bank in Armenia"** 4 times in the row by the European Bank for Reconstruction and Development (EBRD). Moreover, in 2021 the EBRD increased the trade financing limit for the Bank by USD 6.5 million totaling USD 28.5 million which is currently one of the largest limits in the Armenian banking system.

At the same time, the Bank was awarded as the **"Leading Partner Bank in Armenia"** in 2021 by the Asian Development Bank (ADB) based on trade finance results. In 2021, the Asian Development Bank increased the trade finance limit by USD 4 million making it over USD 9 million.



2021թ-ին Բանկը շարունակել է ակտիվ գործունեություն վարել կորպորատիվ, այդ թվում՝ ՓՄՁ վարկավորման և «Կանաչ» ու էներգաարդյունավետ նախագծերի ֆինանսավորման ուղղություններով: 2021թ-ին Բանկը միացել է KfW-ի կողմից իրականացվող «ՄՓՄՁ Աջակցում» վարկային ծրագրի երկրորդ փուլին, ինչպես նաև Բանկը ՎԶԵԲ-ի հետ կնքել է 2 նոր վարկային պայմանագրեր՝ Արևելյան գործընկերության ՓՄՁ-ների մրցունակության ծրագրի և Կանաչ տնտեսության ֆինանսավորման համար Հայաստանում էներգաարդյունավետության ծրագրի 2-րդ փուլի շրջանակում ներգրավելով 8 մլն ԱՄՆ դոլար ծավալով արտոնյալ վարկային միջոցներ:

Վարկավորման գործընթացում հաճախորդներին տարբեր շահավետ գործիքներ առաջարկելու նպատակով Բանկը մշտապես կարևորում է տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության խորացումն ու ընդլայնումը: 2021թ-ի ընթացքում Բանկը շարունակել է ընդլայնել հարաբերությունները ՎԶԵԲ-ի, ԱԶԲ-ի, "FCI" միջազգային ֆակտորինգային ասոցիացիայի, «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ Հիմնարկի, «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի և մեր մյուս գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ:

In 2021, the Bank continued to be active in corporate financing porgram including SME lending and financing of "Green" and energy efficient projects. In 2021 the Bank joined the second phase of the "MSME Support" program implemented by KfW, the EBRD and the Bank has signed two new loan agreements totaling USD 8 million under "The SME Competitiveness Program in Eastern Partnership" and GEFF in Armenia Phase II Energy Efficiency Program.

To offer customers various profitable tools in the lending process the Bank gives huge importance to the cooperation with local and international organizations. During 2021 the Bank has expanded its relations with EBRD, ADB, FCI International Factoring Association, German-Armenian Fund, Export Insurance Agency of Armenia CJSC, National Mortgage Company RCO CJSC and Home for Youth RCO CJSC and other partner financial institutions.





Հատկանշական է նաև ՀՀ-ում «Կանաչ» ֆինանսավորման ոլորտի զարգացմանն ուղղված “Scaling up green finance practices in Armenia” ծրագրի շրջանակում Բանկի, Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) ու ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համագործակցությունը, որում Բանկը դեռևս 2020թ-ից GCF-ի կողմից ընտրվել է որպես ծրագրի համակարգող գործընկեր: 2021թ-ին միջազգային հեղինակավոր խորհրդատվական ընկերությունների անմիջական մասնակցությամբ շահառուների կարողությունների բարձրացման նպատակով իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են եղել միջազգային փորձի ուսումնասիրությանը, ՀՀ-ում առկա խնդիրների բացահայտմանը և ոլորտի զարգացմանը:

Շարունակելով իր ակտիվ ներդրումային գործունեությունը՝ Բանկն արժեթղթերի պորտֆելի ծավալով 2021թ-ին բանկային համակարգում շարունակել է զբաղեցնել 1-ին հորիզոնականը: Հաշվի առնելով արժեթղթերի շուկայում առաջատար դիրքը, Բանկը պարտատոմսեր թողարկող մի շարք ֆինանսական կազմակերպությունների համար հանդես է եկել որպես արժեթղթերի մարքեթ-մեյքեր և ֆոնդային բորսայում կազմակերպել պարտատոմսերի երկկողմանի գնանշումներ:

Բանկն առանձնակի ուշադրություն է դարձրել ֆինանսական շուկայում բանկերի, վարկային կազմակերպությունների, կենսաթոշակային ակտիվների կառավարիչների, ապահովագրական ու ներդրումային ընկերությունների համար որպես միջնորդ օղակ ծառայությունների մատուցմանը՝ հնարավորություն ընձեռելով միջազգային և տեղական շուկաներում ներդրումներ կատարել տարբեր ֆինանսական գործիքներում:

It is remarkable the cooperation of the Bank with the Green Climate Fund (GCF) and the Ministry of Environment of the Republic of Armenia within the framework of the “Scaling up green finance practices in Armenia” program which aimed at the development of the “Green” financing sector in Armenia and where the Bank has been chosen as a project coordinating partner by GCF since 2020. In 2021, a number of activities were undertaken with the direct participation of reputable international consulting companiesto increase the capacity of beneficiaries, which were aimed at studying international experience, identifying issues in Armenia and developing the sector.

Actively continuing in investment activity in 2021 the Bank ranked first in the banking system in terms of securities portfolio. Taking into account the leading position in the securities market, the Bank acted as a securities market maker for a number of bond-issuing financial institutions organizing bilateral quotations of bonds at the trading sessions of the stock exchange.

The Bank has paid special attention to its role in the financial market as intermediary service provider for banks, non-bank financial institutions, pension funds’ managers, insurance and investment companies by offering various products in both RA and international financial markets thus enabling investments in various financial instruments.



Բանկի Խորհրդի, Տնօրինության, ղեկավար անձանց և աշխատակիցների ջանքերի ու հաճախորդամետ մոտեցումների շնորհիվ հնարավոր է դարձել պահպանել Բանկի ծառայությունների մրցակցային պայմանները և ներգրավել նոր հաճախորդներ։ Հաճախորդների հետ մեր ամենօրյա աշխատանքի արդյունքում պարբերաբար վերանայվել է մեր ծառայությունների պայմանները՝ առավելագույնս բավարարելով հաճախորդների պահանջմունքները։

Մենք շարունակելու ենք աշխատել նույն եռանդով և վճռականությամբ՝ հավատարիմ մնալով մեր սկզբունքներին ու հետամուտ լինելով առաջիկա տարիների մեր ռազմավարական նպատակների իրագործմանը։

Իմ ու Բանկի անձնակազմի անունից խորին շնորհակալություն եմ հայտնում մեր հաճախորդներին, գործընկերներին, Խորհրդին և բաժնետերերին Բանկին ցուցաբերած վստահության, աջակցության ու փոխշահավետ համագործակցության համար։

Միաժամանակ հայտնում եմ իմ երախտագիտությունը Բանկի անձնակազմին պրոֆեսիոնալ և նվիրված աշխատանքի համար։

Thanks to the efforts customer-oriented approach of the Bank's Board, management and employees, the Bank has been able to maintain its competitive role and attract new clients. As a result of our day-to-day interactions with customers we regularly reviewed the terms of our services to best meet their needs.

We will keep on working with the same energy and determination remaining true to our principles and pursuing our strategic objectives in the forthcoming years.

On behalf of the Bank staff, I would like to express my sincere gratitude towards our Customers, Partners, Bank's Board members and shareholders for their trust and mutual beneficial cooperation.

I would also like to express my gratitude to the staff of the Bank for their professionalism and commitment.

# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

# MAIN INDICATORS AND ACHIEVEMENTS

| ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ<br>MAIN INDICATOR | 2021 | 2020 | ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (%)<br>CHANGES (%) |
|---|---|---|---|
| Ընդանուր ցուցանիշներ (մլն ՀՀ դրամ) / Total Indicators (mln AMD) | | | |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ<br>TOTAL ASSETS** | **398,420** | **386,139** | **3.2%** |
| Վարկային պորտֆել (ներառյալ՝ ֆակտորինգ)<br>Loan Portfolio (Including Factoring) | 116,760 | 123,498 | (5.5)% |
| Արժեթղթերի պորտֆել<br>Securities Portfolio | 243,775 | 221,380 | 10% |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br>TOTAL LIABILITIES** | **339,353** | **323,207** | **5%** |
| Ավանդային պորտֆել<br>Deposit Portfolio | 123,997 | 134,700 | (8)% |
| Թողարկված պարտատոմսերի պորտֆել<br>Portfolio of issued bonds | 58,839 | 64,912 | (9.4)% |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ<br>EQUITY CAPITAL** | **59,067** | **62,932** | **(6.1)%** |
| Շահույթ<br>Profit | 7,765 | 6,026 | 29% |
| Այլ ցուցանիշներ / Other Indicators | | | |
| **ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ (ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ)<br>EMPLOYEES (ANNUAL AVERAGE)** | **146** | **149** | **(2.1)%** |
| **ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ<br>CUSTOMERS** | **3,421** | **3,330** | **2.7%** |
| Գործակիցներ / Ratios | | | |
| **ROA** | **1.97%** | **1.83%** | **7.7%** |
| **ROE** | **12.37%** | **9.05%** | **36.7%** |
| Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ (մլն ՀՀ դրամ)<br>Income per employee(million AMD) | 252.0 | 223.0 | 13.0% |
| Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ (մլն ՀՀ դրամ)<br>Profit per employee(million AMD) | 64.4 | 50.0 | 28.8% |
| Բանկում պահառության վերցված արժեթղթեր<br>Custody securities were taken in the Bank | 70.1 | 69.4 | 1% |

# ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ

## 2021թ-ին տեղի են ունեցել Բանկի համար մի շարք կարևոր իրադարձություններ, որոնցից ներկայացնում ենք հիմնականները: Մասնավորապես.

- ՎԶԵԲ-ի տարեկան ժողովի շրջանակում առևտրի ֆինանսավորման ծրագրի (TFP) ոլորտում 2021թ-ի ցուցանիշների արդյունքներից ելնելով Բանկը չորրորդ տարին անընդմեջ արժանացել է «Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում» մրցանակին:
- Առևտրի ֆինանսավորման ոլորտի նախորդ տարվա ցուցանիշների ամփոփման արդյունքում Բանկն ԱԶԲ-ի կողմից արժանացել է առևտրի ֆինանսավորման ոլորտում 2021թ-ի «Առաջատար գործընկեր բանկ ՀՀ-ում» մրցանակին:
- Բանկի և ՎԶԵԲ-ի միջև կնքվել է Արևելյան գործընկերության ՓՄՁ-ների մրցունակության ծրագրի (Եվրոպական միության (ԵՄ) աջակցությամբ) ու Կանաչ տնտեսության ֆինանսավորման համար Հայաստանում էներգաարդյունավետության ծրագրի 2-րդ փուլի (Կանաչ կլիմայի հիմնադրամի աջակցությամբ) շրջանակներում 2 վարկավորման նոր պայմանագիր՝ 8 մլն ԱՄՆ դոլար ծավալով:
- Բանկի և ԿԲ-ի միջև ստորագրված վարկային պայմանագրի համաձայն՝ Բանկը 2021 թվականի հունիս ամսին միացել է KfW բանկի կողմից իրականացվող «ՄՓՄՁ Աջակցում» վարկային ծրագրի երկրորդ փուլին:

# ACHIEVEMENTS

## In 2021, a number of important for the Bank events took place, in particular:

- During the annual meeting Of the EBRD within the framework of TFP, based on the results of 2021 indicators the Bank was awarded with “The Most Active Issuing Bank in Armenia” by the EBRD for the forth year in a row.
- As a result of previous year the Bank was awarded with “Leading Partner Bank in Armenia” by the Asian Development Bank in the field of trade financing in 2021.
- The Bank and the EBRD has signed two new loan agreements totaling USD 8 million dollars within the framework of the Eastern Partnership SME Competitiveness Program (supported by the European Union (EU)) and the second phase of the Energy Efficiency Program for Financing Green Economy in Armenia (supported by the Green Climate Fund).
- According to a loan agreement signed between the Bank and the Central Bank of Armenia, the Bank has joined the second phase of the “MSME Support” program implemented by the KfW.

# ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

# CLIENTS

**Հաճախորդների սպասարկումը Բանկի կառավարման մարմինների և աշխատակազմի կողմից մշտապես արժանացել է առանձնահատուկ ուշադրության: Տվյալ մոտեցումը համահունչ է Բանկի որդեգրած ռազմավարական արժեքներին, որի նպատակն է ապահովել հաճախորդների ամբողջական բարձրակարգ սպասարկում՝ ցուցաբերելով յուրաքանչյուր հաճախորդին անհատական մոտեցում:**

**Customer service has always received special attention from the Bank’s management and staff. This approach is in line with the strategic values adopted by the Bank, and the goal is to provide full high quality customer service, providing an individual approach to each customer.**

Ֆինանսավորման ոլորտում Բանկի համար որպես հիմնական թիրախային հաճախորդներ են հանդիսանում այն բիզնես հաճախորդները, որոնք զբաղվում են արտադրական և արտահանմանն ուղղված գործունեությամբ, որոնց ֆինանսավորումը Բանկն իրականացնում է ոչ միայն ավանդական վարկավորման, այլ նաև առևտրի ֆինանսավորման գործիքների միջոցով՝ խթանելով արտադրության ու արտահանման ծավալների ավելացումը: Վերջին տարիներին Բանկի համար չափազանց կարևոր է դարձել նաև արտադրական վերազինման և տեխնոլոգիական զարգացման, էներգաարդյունավետ և «կանաչ» ծրագրերի ֆինանսավորումը:

The main target clients for the Bank in the field of financing are the business clients engaged in production-export activities, which the Bank finances not only through traditional lending, but also through trade financing instruments, thus stimulating the increase in production-export volumes. In recent years, it has become extremely important for the Bank to finance production upgrades, technological development, energy-efficient and “green” projects.

31.12.2021թ-ի դրությամբ ակտիվ հաճախորդների թվաքանակը կազմել է 3,421, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատությամբ աճել է շուրջ 3%-ով։

31.12.2021թ-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար 39% և 61%։

Բանկը հաճախորդների համար թողարկում և սպասարկում է MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard Business քարտեր։ Թեպետ քարտերի թողարկումը և սպասարկումը Բանկի համար չի հանդիսանում ռազմավարական բիզնես ուղղություն, սակայն նշված ծառայությունների մատուցումը պայմանավորված է հաճախորդներին համալիր ծառայությունների ապահովման անհրաժեշտությամբ։

As of 31.12.2021, the number of Bank's customers was 3,421, which was increased by about 3% comparing with the indicator of last year.

As of 31.12.2021, the share of legal entities and individual customers was 39% and 61%, respectively.

The Bank issues and serves MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard Business plastic cards for customers. Although card issuance and service is not a strategic business direction for the Bank, the provision of these services is conditioned by the need to provide comprehensive customer services to the clients.



# ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

# LENDING

**Բանկի 2021 թվականի վարկային գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու իրադարձությունները.**

**The main indicators and events characterizing the lending activity of the Bank in 2021.**

## ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

## LOAN INSTRUMENTS AND LOAN PORTFOLIO

Տնտեսության վարկավորումը Բանկի ռազմավարական էական բիզնես ուղղությունն է: Վարկավորման ընդհանուր ներդրումների ծավալը 31.12.2021թ-ի դրությամբ կազմել է Բանկի ընդհանուր ակտիվների 29.3%-ը:

Բանկի որդեգրած քաղաքականությամբ պայմանավորված վարկավորման գործունեության մեջ Բանկը շարունակում է նախապատվություն տալ կայուն բիզնես, զարգացման տեսանելի հեռանկարներ, կառավարման որակյալ համակարգ և բարի համբավ ունեցող կայացած կորպորատիվ հաճախորդներին: Բանկը պատրաստակամորեն համագործակցել է այն հաճախորդների հետ, ովքեր հետաքրքրված են կամ ակտիվորեն օգտվում են Բանկի կողմից առաջարկվող այլ ծառայություններից:

Lending is a strategically important business direction for the Bank. The volume of total credit investments as of 31.12.2021 was 29.3% of the Bank's assets.

In the lending policy adopted by the Bank, the Bank continues to give priority to stable business, visible development prospects, quality management system and corporate clients with good reputation. The Bank is ready to cooperate with customers who are interested or actively use other services offered by the Bank.

**Բանկը շարունակում է հաճախորդներին առաջարկել վարկային գործիքների լայն փաթեթ.**

- վարկեր, վարկային գծեր, օվերդրաֆտներ, այդ թվում՝ քարտային օվերդրաֆտներ,
- բանկային երաշխիքներ, ակրեդիտիվներ,
- գնման պատվերի ֆինանսավորում, նախաարտահանման և հետարտահանման ֆինանսավորում, ֆակտորինգ,
- նախագծային ֆինանսավորում, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետ նախագծերի և մեզանին ֆինանսավորում,
- լիզինգային ֆինանսավորում և հաճախորդների կարիքներից բխող այլ ծառայություններ:

**The Bank continues to offer a wide range of credit instruments to its customers.**

- Loans, credit lines, overdrafts, including card overdrafts,
- Bank guarantees, letters of credit
- Purchase order financing, pre-export and post-export financing, factoring,
- Project financing, including financing of renewable energy, energy efficient projects,
- Leasing financing - other services based on customer needs

Հաճախ, ելնելով հաճախորդի անհատական պահանջմունքներից, Բանկը կարող է միաժամանակ համակցել մի քանի վարկային գործիքներ կամ նախապես նախատեսել փոխարինել վարկային մեկ գործիքը մյուսով՝ ելնելով նպատակից, ժամկետայնությունից, մարման աղբյուրից և այլն: Նշված գործելաոճի կիրառումը հնարավորություն է ընձեռում հաճախորդին ստանալ առավել ճկուն և մատչելի պայմաններով ֆինանսական լուծումներ:

Բանկի կողմից տնտեսության վարկավորման հիմնական ոլորտներ են հանդիսանում արդյունաբերությունը (սննդի արդյունաբերություն, ձկնաբուծություն, թեթև արդյունաբերություն և այլն), այդ թվում նաև՝ արտահանող արդյունաբերությունը, էներգետիկան, հատկապես՝ վերականգնվող էներգիայի ոլորտը, առևտուրը, գյուղատնտեսությունը (գյուղատնտեսական ապրանքների արտադրություն, վերամշակում, պտղատու այգիների հիմնում և այլն), տուրիզմը և ֆինանսական ոլորտը:

Often, depending on the individual needs of the customer, the Bank may combine several loan instruments at the same time or plan in advance the replacement of one loan instrument with another depending on the purpose, maturity, source of repayment, etc. The mentioned working style enables the client to get more flexible financial solutions with affordable terms.

The main areas of lending are industry (food industry, public catering, service, fish farming, light industry, etc.), including export industry, energy, especially renewable energy, trade, agriculture (production of agricultural products, processing, planting of orchards, etc.), tourism and financial sector.

The Bank offers medium or long-term financing instruments for capital investments, energy efficiency enhancement and / or working capital, and mainly short-term financing instruments for trade financing.

Բանկը կապիտալ ներդրումների, էներգաարդյունավետության բարձրացման և/կամ շրջանառու միջոցների համալրման նպատակով առաջարկում է միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման գործիքներ, իսկ առևտրի ֆինանսավորման նպատակով՝ հիմնականում կարճաժամկետ ֆինանսավորման գործիքներ:

Բանկը ՀՀ բանկային համակարգում իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելում զբաղեցրել է 9-րդ հորիզոնականը և 31.12.2021թ-ի դրությամբ իր մասնաբաժինը կազմել է ՀՀ բանկային համակարգի իրավաբանական անձանց տրված վարկերի պորտֆելի շուրջ 4.1%-ը:

Անհատական վարկային ծառայությունների շրջանակում Բանկը տարեցտարի ակտիվացնում է իր գործունեությունը հիփոթեքային շուկայում՝ հաճախորդներին հետևողականորեն առաջարկելով մրցակցային պայմաններով վարկային գործիքներ:

Վարկային պորտֆելի ֆինանսավորումն իրականացվում է ինչպես Բանկի սեփական ռեսուրսներով, այնպես էլ տեղական և միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրած ծրագրային միջոցներով: 31.12.2021թ-ի դրությամբ վարկային պորտֆելի շուրջ 24%-ը կազմել են տեղական ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրված ծրագրային միջոցներով ֆինանսավորված վարկերը:

2021թ-ի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է շուրջ 116,760 մլն ՀՀ դրամ, որը նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշի համեմատությամբ նվազել է 5.5%-ով, իսկ վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 11.4 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է շուրջ 12.3%-ով:

The Bank ranked 9th term of the corporate loans portfolio in the Armenian banking system and as of 31.12.2021, its share was about 4.1% of corporate loans portfolio in the Armenian banking system.

Within the framework of individual credit services, the Bank stimulates its activities in the mortgage market year by year, offering competitive loan instruments to its customers.

The loan portfolio is financed both from the Bank's own resources and through funds provided by local and international financial organizations. As of 31.12.2021, 24% of the loan portfolio was financed by funds provided by local and international financial organizations.

As of the end of 2021, the Bank's total loan portfolio amounted to about AMD 116,760 million, which is 5.5% lower than the same indicator of the previous period, and interest income from credit investments amounted to about AMD 11.4 billion, which increased by about 12.3% compared to the same indicator of the previous year.

# ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԾԱՎԱԼԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

# THE DYNAMICS OF LOAN PORTFOLIO AND INTEREST INCOME FROM LOAN PORTFOLIO

**Վարկային պորտֆել**
(մլրդ ՀՀ դրամ)

**The Loan portfolio**
(Billion AMD)




**Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան** (մլրդ ՀՀ դրամ)

**The Dynamic of interest income on lending activities**
(AMD Billion)




Բանկում վարկավորումը զարգացել է հետևյալ հիմնական ուղղություններով*.

- Կորպորատիվ, այդ թվում ՓՄՁ վարկավորում
- Նախագծային ֆինանսավորում
- Անհատական վարկավորում
- Արտահանման ֆինանսավորում և ֆակտորինգ

** Սույն բաժնում օգտագործված ցուցանիշները ներկայացված են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան:*

The main directions of the Bank's Bank lending are:

- Corporate Lending, including SME Lending
- Project Financing
- Individual Lending
- Export Financing and Factoring

** The indicators used in this section are presented in accordance with the principles set by the Central Bank of Armenia.*

# ԿՈՐՊՈՐԱՏԻՎ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՓՄՁ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Այստեղ կենտրոնացված է Բանկի վարկային պորտֆելի գերակշիռ մասը, որը 2021թ-ի վերջի դրությամբ կազմել է շուրջ 60.4 մլրդ ՀՀ դրամ[1] կամ ընդհանուր վարկային պորտֆելի 50%-ը: 2020թ-ի տարեվերջի՝ 74.5 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ կորպորատիվ վարկավորման պորտֆելը 2021թ-ին նվազել է շուրջ 19%-ով:

Կորպորատիվ, այդ թվում ՓՄՁ վարկերի պորտֆելում ընդգրկված են խոշոր և ՓՄՁ հաճախորդներին շրջանառու և կապիտալ ներդրումների նպատակով, այդ թվում՝ առևտրի ֆինանսավորման, գյուղատնտեսական (պետական ծրագրերի շրջանակներում) նպատակներով տրված վարկերն ու ֆինանսական վարձակալությունները, վարկային գծերը, օվերդրաֆտները և այլն, բացառությամբ նախագծային ֆինանսավորման շրջանակում տրված վարկերի պորտֆելի (ներկայացված է առանձին բաժնով): Թիրախային հաճախորդներ են համարվում արտադրություն կազմակերպող, այդ թվում՝ ներմուծումը փոխարինող ու արտահանման պոտենցիալ ունեցող հաճախորդները, որոնց համար Բանկն ունի և մշտապես զարգացնում է միջազգային չափանիշներին համապատասխանող բազմաթիվ ծառայություններ:

Կորպորատիվ, այդ թվում՝ ՓՄՁ վարկավորման ոլորտում նշանակալի իրադարձություն է համարվում 2021թ-ից KfW բանկի «ՄՓՄՁ Աջակցում» ծրագրին Բանկի մասնակցությունը (որի շրջանակում ՓՄՁ-ներին տրամադրվում են ՀՀ դրամով մատչելի պայմաններով վար-

[1] Այս ցուցանիշում ներկայացված չեն իրավաբանական անձանց դեբիտորական պարտքի ֆինանսավորման և նախաարտահանման ու հետարտահանման վարկերը: Դրանք ընդգրկված են «Արտահանման ֆինանսավորում և ֆակտորինգ» բաժնում:

# CORPORATE LENDING, INCLUDING SME LENDING

The majority of the Bank's loan portfolio is concentrated in this sector, which, at the end of 2021, amounted to about AMD 60.4 billion[1] or 50% of the total loan portfolio. The corporate loan portfolio decreased by 19% in 2021 compared to the indicator of the end of 2020, which was AMD 74.5 billion.

The corporate loan portfolio includes loans for large and SME clients for their capital investments, working capital, including energy efficiency, trade finance, agricultural (within the framework of government programs) and leasing, credit lines, overdraft loans, etc., except loans granted within the scope of project financing(which is presented in a separate section).Target customers for the Bank are those who organize production, including import substitution, have export potential, for which the Bank has and constantly develops a number of services that meet international standards.

The Bank's participation is considered a significant event the KfW Bank's "SME Support" program from 2021 in the field of corporate and SME lending (under which affordable terms loans are provided SME), as well as the Eastern Partnership SMEs with the EBRD. Cooperation in the framework of the Competitiveness Program (supported by the European Union (EU)), within the framework of which the Bank has attracted a loan of USD 4 million from the EBRD.

[1] This indicator does not include loans for legal entities, debt financing, pre-export and post-export loans of clients related to the Bank. They are included in the "Export Financing and Factoring" section.

կեր), ինչպես նաև ՎԶԵԲ-ի հետ Արևելյան գործընկերության ՓՄՁ-ների մրցունակության ծրագրի (Եվրոպական միության (ԵՄ) աջակցությամբ) ուղղությամբ համագործակցությունը, որի շրջանակում Բանկը ՎԶԵԲ-ից ներգրավել է 4 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկային միջոցներ: Վարկային միջոցներն ուղղվելու են ՓՄՁ-ների չափանիշների բարձրացմանը, արտադրության արդիականացմանը, աշխատանքային պայմանների բարելավմանը և տեղական ու միջազգային շուկաներում մրցունակության խթանմանը: Բացի այդ, բիզնես վարկավորման ոլորտում մեծ նշանակություն ունեն առևտրի ֆինանսավորման նպատակով տրված վարկերը: ԱՖԾ շրջանակում Բանկը համագործակցում է ՎԶԵԲ-ի և ԱԶԲ-ի հետ ու իր հաճախորդներին մատուցում է ներմուծման և արտահանման կարճաժամկետ վարկեր, ակրեդիտիվներ, ինկասոներ և միջազգային երաշխիքներ:

The loans will be used to increase the criteria of SMEs, modernize production, improve working conditions, and promote competitiveness in local and international markets. In addition, trade finance loans are very important in the field of business lending. Within the framework of the TFP, the Bank cooperates with the EBRD and the ADB, which provides its customers with short-term import-export loans, letters of credit, documentary collectionsand international guarantees.

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Այստեղ կենտրոնացված է Բանկի վարկային պորտֆելի այն հատվածը, որը ֆինանսավորում է վերականգնվող էներգիայի, շինարարության, գյուղատնտեսական և այլ ոլորտների, ինչպես նաև նոր սկսնակ բիզնես նախագծերի կապիտալ ներդրումները: 2021թ-ի վերջի դրությամբ նախագծերի ֆինանսավորման պորտֆելը կազմել է շուրջ 30.9 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր վարկային պորտֆելի ավելի քան 25%-ը: 2020թ-ի տարեվերջի՝ 26.4 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ նախագծերի ֆինանսավորման պորտֆելը 2021թ-ին գրանցել է շուրջ 17% աճ:

2021թ-ի համար նախագծերի ֆինանսավորման ոլորտում առանձնահատուկ ակտիվ են եղել սեփական կարիքների ու բիզնես նպատակով արևային կայանների նախագծերի և շինարարական նախագծերի ֆինանսավորումները:

## PROJECT FINANCING

Here is the part of loan portfolio which finances renewable energy, construction, agriculture and other sectors, as well as capital investments in new start-up business projects. As of the end of 2021, the project financing portfolio amounted to about AMD 30.9 billion or more than 25% of the total loan portfolio. In 2021 the project financing portfolio increased of about 17% compared to the volume of last year which was AMD 26.4 billion.

In 2021, financing of solar stations and construction projects for own needs and business purposes have been extremely active.

Նախագծերի ֆինանսավորման ոլորտում նշանակալի իրադարձություն է համարվում 2021թ-ին Կանաչ տնտեսության ֆինանսավորման համար Հայաստանում էներգաարդյունավետության («GEFF-ը Հայաստանում») ծրագրի 2-րդ փուլի շրջանակում Բանկի և ՎԶԵԲ-ի միջև վարկային նոր պայմանագրի կնքումը։ Բանկը ներգրավել է 4 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկային միջոցներ, որոնք տրամադրվում են իրավաբանական անձ հաճախորդներին կանաչ տեխնոլոգիաների՝ հատկապես կլիմայի հարմարվողականությանը և մեղմացմանն ուղղված ներդրումների համար։ Ֆինանսավորում են ստանում այնպիսի նախագծեր, ինչպիսիք են՝ ջերմամեկուսացումը, սեփական սպառման համար արևային ՖՎ էլեկտրակայանները, գեոթերմալ ջերմային պոմպերն ու ջրարդյունավետ ոռոգման համակարգերը։

2021թ-ի վերջի դրությամբ Բանկը հաջողությամբ իրականացրել է շուրջ 17.7 մլրդ ծավալի 105 արևային կայանների ծրագրերի ֆինանսավորում, որն իր ծավալներով ՀՀ բանկային համակարգում լավագույն ցուցանիշներից է։ Ինչի շնորհիվ հնարավոր է դարձել կրճատել 52,000 տոննա ածխաթթու գազի արտանետումը։ Այսպիսի արդյունքներ հնարավոր է եղել KfW բանկի Վերականգնվող էներգիայի զարգացման և էներգաարդյունավետության ծրագրերի, ինչպես նաև ՎԶԵԲ-ի հետ կնքված Կանաչ տնտեսության ֆինանսավորման համար Հայաստանում էներգաարդյունավետության ծրագրի շրջանակում ներգրավված ծրագրային, ինչպես նաև Բանկի սեփական ռեսուրսներով ֆինանսավորման հաշվին։ Նույն ժամանակահատվածի վերջի դրությամբ Բանկի սեփական ռեսուրսների հաշվին ֆինանսավորվել են 8 շինարարական նախագծեր՝ շուրջ 8.4 մլրդ ՀՀ դրամ ծավալով։ Հատկանշական է, որ Բանկը ԳՀՀ էներգաարդյունավետության ծրագրի շրջանակում ֆինանսավորել է առաջին էներգախնայող շենքի կառուցապատման ծրագիրը, որը Բանկի համար համարվում է հեռանկարային ուղղություն։

In the field of project financing is considered a significant event in 2021, within the framework of the 2nd phase of the Green Economy Financing in Armenia ("GEFF in Armenia") program, the signing of a new loan agreement between the Bank and the EBRD.The Bank has attracted a loan of USD 4 million, which are provided to corporate clients in green technologies for climate adaptation and mitigation investments. Funding is provided for projects such as thermal insulation, solar PV plants for their own consumption, geothermal heat pumps, water-efficient irrigation systems.

As of the end of 2021, the Bank has successfully financed about 105 solar station projects, amounting to more than AMD 17.7 billion, which is one of the best indicators in the Armenian banking system. Due to this it was possible to reduce 52,000 tons of $CO_2$ emissions. Such results were made with effortable resources under KFW's Renewable Energy Development Program, the EBRD's Energy Efficiency Program and with the Bank's own resources. During the same period, the Bank financed 8 construction projects in the amount of about AMD 8.4 billion from its own resources. It is noteworthy that the Bank has financed the construction project of the first energy-saving building within the framework of the GAF Energy Efficiency Program, which is considered a perspective direction for the Bank.

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Թիրախային չհամարելով մանրածախ բանկային ծառայությունների շուկան՝ Բանկն առանձնակի հետաքրքրություն է ցուցաբերում հիփոթեքային վարկավորման ոլորտին, որտեղ տարիներ շարունակ արձանագրել է կայուն աճի տեմպեր: Հիփոթեքային վարկավորումն էական նշանակություն ունի Բանկի կողմից ֆինանսավորված շինարարական նախագծերի համար, քանի որ հիփոթեքային վարկերի տրամադրմամբ Բանկն առավել ճկուն և կառավարելի է դարձնում վարկային ռիսկերն ու նախագծերի անխափան իրականացումը: 2021թ-ի վերջի դրությամբ անհատական վարկերի պորտֆելը (ներառյալ սպառողական վարկերը) կազմել է 17.3 մլրդ ՀՀ դրամ կամ ընդհանուր վարկային պորտֆելի ավելի քան 14%-ը: 2020թ-ի տարեվերջին՝ 16.0 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ հիփոթեքային վարկերի պորտֆելը 2021թ-ին գրանցել է շուրջ 8% աճ:

Բանկն առաջարկում է բնակարանների ձեռքբերման, վերանորոգման և կառուցապատման վարկեր, ինչպես ֆիքսված, այնպես էլ փոփոխական տոկոսադրույքով մինչև 20 տարի մարման ժամկետով: Հիփոթեքային վարկերի ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում Բանկի սեփական ռեսուրսները, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ից և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ից ներգրավված ծրագրային միջոցները:

Չնայած մասնագիտացված լինելով կորպորատիվ բանկային ծառայությունների շուկայում՝ Բանկը ծառայությունների ամբողջականության ապահովման նպատակով անհատական վարկեր (հիփոթեքային, սպառողական և քարտային) է առաջարկում Բանկի կորպորատիվ հաճախորդների սեփականատերերին, ղեկավար անձնակազմին և աշխատակիցներին:

# INDIVIDUAL LENDING

Not being considered a target in retail banking, the Bank is particularly interested in mortgage lending, which has been growing steadily for years. Mortgage lending is essential for construction projects financed to the Bank’s corporate clients, as the provision of mortgage loans makes the credit risks more flexible and manageable for the Bank and ensures the smooth implementation of projects. As of the end of 2021, the mortgage loan portfolio (including consumer loans) amounted to AMD 17.3 billion or about 14% of the total loan portfolio. In 2021, the mortgage loan portfolio increased of about 8% compared to the volume of last year which was AMD 16.0 billion.

The Bank offers customers mortgage loans for purchase, repair and construction. Mortgage loans are provided with both fixed and floating interest rates for up to 20 years tenor.

The source of mortgage loan financing is the Bank's own resources, program funds involved from "National Mortgage Company" CJSC and "Housing for Youth" CJSC.

Although specialized in the corporate banking market, the Bank offers individual loans (mortgage, consumer and credit loans) to the owners, management staff and employees of the Bank’s corporate clients.

# ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՖԱԿՏՈՐԻՆԳ (ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ)

Առևտրի ֆինանսավորումը և ֆակտորինգը Բանկի վարկային գործունեության կարևոր և հիմնական ուղղություններից են։ Բանկն առևտրի ֆինանսավորման և ֆակտորինգի ոլորտում շարունակում է մնալ ՀՀ բանկային համակարգի առաջատարներից, և այդ առումով ընթացիկ տարին ևս բացառություն չէր։ Որպես ասվածի վառ ապացույց հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ Բանկը 2021 թվականի գործունեության արդյունքներով ՎԶԵԲ-ի կողմից չորրորդ տարին անընդմեջ արժանացել է «Հայաստանի Ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակին։ Ավելին, 2021թ-ին առևտրի ֆինանսավորման ոլորտի նախորդ տարվա ցուցանիշների ամփոփման արդյունքում Բանկն ԱԶԲ-ի կողմից արժանացել է առևտրի ֆինանսավորման ոլորտում 2021թ-ի «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակին։

Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկի համար առանցքային նշանակություն ունի արտահանման ֆինանսավորումը։

Արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի ուղղությամբ Բանկն առաջարկում է ներքին ֆակտորինգ և դեբիտորական պարտքի ֆինանսավորում, իսկ համագործակցելով իր գործընկեր ֆինանսական կազմակերպությունների հետ (ՎԶԵԲ, ԱԶԲ, ՅԱԱԳ, Միջազգային ֆակտորինգային ասոցիացիայի անդամ բանկեր) հաճախորդներին մատուցում է առևտրի ֆինանսավորման միջազգայնորեն ընդունված բոլոր գործիքները, այդ թվում՝ ակրեդիտիվ, ինկասո, միջազգային երաշխիք, հետարտահանման և նախաարտահանման ֆինանսավորում։

# EXPORT FINANCING AND FACTORING (DOMESTIC AND INTERNATIONAL)

Trade financing and factoring are one of the important directions of the Bank's credit activity. The Bank continues to be one of the leaders in the Armenian banking system in the field of trade financing and factoring. As a vivid proof of this, it is worth mentioning that the Bank already forth year was awarded "The Most Active Issuing Bank in Armenia" by the EBRD. More, as a result of previous year the Bank was awarded "Leading Partner Bank in Armenia" award by the Asian Development Bank in the field of trade financing in 2021.

In the field of trade financing, export financing is of key importance for the Bank.

Within the framework of export financing and factoring, the Bank offers to its clients domestic factoring and accounts receivable financing and in cooperation with its partner financial organizations (the EBRD, the ADB, EIAA, Banks of the International Factoring Association) provide clients internationally accepted all trade finance tools, including letter of credit, collection, international guarantee, post-export and pre-export financing.

As of the end of 2021, the total portfolio of export financing and factoring amounted AMD 10.7 billion, which increased of about 9.2% compared to the end of 2020. Export financing and factoring portfolio is about 9.0% of the total loan portfolio. As the tools used in the export financing and factoring portfolio are short-term, it is interesting to consider the total volume of allocations, which in 2021 amounted to about AMD 39,976 million, which increased of about 26.0% compared to the end of 2020.

2021թ-ի վերջի դրությամբ արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգի պորտֆելը կազմել է 10.7 մլրդ ՀՀ դրամ՝ գերազանցելով 2020թ-ի ցուցանիշը 9.2%-ով և կազմելով Բանկի ընդհանուր վարկային պորտֆելի շուրջ 9.0%-ը: Հաշվի առնելով, որ արտահանման ֆինանսավորման և ֆակտորինգային գործիքները կրում են կարճաժամկետ բնույթ, ուստի հետաքրքրական է անդրադառնալ 2021թ-ի ընթացքում տրամադրված ֆինանսավորումների ծավալին, որը կազմել է շուրջ 39,976 մլրդ ՀՀ դրամ՝ 2020թ-ի համեմատ գրանցելով ավելի քան 26.0% աճ:

2021թ-ի վերջի դրությամբ նախաարտահանման և հետարտահանման վարկերի պորտֆելը կազմել է շուրջ 6.9 մլրդ ՀՀ դրամ և 2020թ-ի տարեվերջի՝ 5.4 մլրդ ՀՀ դրամ ծավալի համեմատ գրանցել է շուրջ 27.0% աճ: Այս ուղղությամբ Բանկն ակտիվորեն համագործակցում է ՀԱԱԳ-ի հետ և շարունակում է մնալ նրա ամենաակտիվ գործընկերը ՀՀ բանկային համակարգում:

Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկի ցուցաբերած ակտիվությունը, աշխատակիցների պրոֆեսիոնալիզմն ու այդ ոլորտի գործառնությունների ծավալի աճի պոտենցիալն ապահովել են միջազգային ֆինանսական գործընկերների կողմից Բանկի համար հաստատված սահմանաչափերի տարեցտարի ավելացումը: Միաժամանակ, Բանկն ակտիվ աշխատանքներ է տանում ֆինանսական նոր գործընկերների ներգրավման ուղղությամբ:

As of the end of 2021, the portfolio of pre-export and post-export loans amounted to about AMD 6.9 billion, which increased of about 27.0% compared to the end of 2020 (AMD 5.4 billion).The Bank has always been the most active partner with Export Insurance Agency of Armenia the banking system of Armenia.

The Bank's activity in the field of trade financing, the professionalism of its employees and the potential for growth in the volume of operations in this field have ensured the year by year increase of the limits set for the Bank by its international financial partners. At the same time, the Bank is actively working to attract new financial partners.

Ստորև բերված է ֆակտորինգի և առևտրի ֆինանսավորման գործիքների տրամադրումների ծավալների դինամիկան:

The dynamics of the annual volumes of factoring and trade financing instruments for the last 5 years are presented below.



# ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

# CREDIT RISK MANAGEMENT

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման տեսանկյունից Բանկը մեծ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բաշխվածությանն ըստ առանձին արժույթների, աշխարհագրական դիրքի, ճյուղերի ու ոլորտների՝ նվազեցնելով առանձին ճյուղերում վարկերի կենտրոնացումը։

From the perspective of effective credit risk management, the Bank pays special attention to the diversification of the loan portfolio by separate branches and sectors, reducing the concentration of loans within separate sectors.

Վարկային պորտֆելի կառուցվածքը՝ ըստ արժույթների 31.12.2021թ-ի դրությամբ։

The structure of the loan portfolio as of 31.12.2021 by currencies.



Վերջին երեք տարվա ընթացքում վարկային պորտֆելում գրանցվել է ՀՀ դրամով վարկերի տեսակարար կշռի զգալի աճ, մասնավորապես՝ 2021թ-ի վերջին այն կազմել է 46.9%, մինչդեռ 2020թ-ի և 2019թ-ի համար այն կազմել է համապատասխանաբար 31.7% և 24.3%: Նույն ժամանակահատվածում վարկային պորտֆելում հակառակ միտում է գրանցվել ԱՄՆ դոլարով վարկերի համար, մասնավորապես՝ 2021թ-ին ԱՄՆ դոլարով վարկերը կազմել են 39.6%, իսկ 2020թ-ին և 2019թ-ին՝ համապատասխանաբար 42.4% և 50.3%:

During the last three years, a significant increase in the share of loans in AMD was registered in the loan portfolio, in particular, at the end of 2021 it was 46.9%, while for 2020 and 2019 it was 31.7% and 24.3% respectively. During the same period, the opposite trend was registered in the loan portfolio for loans in US dollars, in particular, in 2021 loans in US dollars amounted to 39.6%, but in 2020 and 2019 it was 42.4% and 50.3% respectively.

Վարկային պորտֆելի բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի:

The distribution of the loan portfolio by sectors of the economy.



# ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

# INVESTMENT ACTIVITIES

**Ներդրումային գործունեությունը Բանկի ռազմավարական բիզնես ուղղություններից է: Բանկը կատարում է ներդրումներ պետական պարտատոմսերում և կորպորատիվ արժեթղթերում, ինչպես նաև հաճախորդներին առաջարկում է ներդրումային ծառայությունների համալիր փաթեթ:**

**Investment activity is a strategic business direction for the Bank, within the framework of which the Bank invests in government bonds and corporate securities, as well as offers customers a comprehensive package of investment services.**

## ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՊՈՐՏՖԵԼ

## OPERATIONS WITH SECURITIES AND SECURITIES PORTFOLIO

2021թ-ի վերջի դրությամբ Բանկի արժեթղթերի պորտֆելը անվանական արժեքով, ներառյալ ռեպո համաձայնագրերով գնված ու վաճառված արժեթղթերը, կազմել է 214,355 մլն ՀՀ դրամ, իսկ հաշվեկշռային արժեքով՝ 243,775 մլն ՀՀ դրամ: Արժեթղթերի պորտֆելը 2020թ-ի վերջի նկատմամբ գրանցել է 10.1% աճ:

Արժեթղթերի պորտֆելը կազմել է Բանկի ընդհանուր ակտիվների 61.2%-ը:

Բանկային համակարգում Բանկի արժեթղթերի պորտֆելն իր ծավալով ամենամեծն է:

As of the end of 2021, the Bank's securities portfolio amounted to AMD 214,355 million with a book value of AMD 243,775 million with a nominal value, which includes securities purchased and sold under repurchase agreements. The securities portfolio grew by 10.1% compared to the end of 2020.

The securities portfolio amounted to 61.2% of the Bank's assets.

The Bank's securities portfolio is the largest in the banking system of RA.

Բանկի արժեթղթերի պորտֆելի ծավալը կրում է տատանողական բնույթ, քանի որ Բանկը, որպես պարտատոմսերի շուկայի ակտիվ մասնակից, իրականացնում է երկրորդային շուկայում արժեթղթերով առքուվաճառքի և դրամական շուկայի գործիքներով (ռեպո, հակադարձ ռեպո գործառնություններ) ակտիվ գործունեություն, որոնք Բանկին ապահովում են զգալի եկամուտներ: Այս մոտեցումն ի սկզբանե բխել է Բանկի ներդրումային գործունեության ոլորտում որդեգրած ռազմավարական նպատակներից և մշտապես իր դրական արդյունքներն է ունեցել ֆինանսական ցուցանիշներում:

The volume of the Bank's securities portfolio is volatile, as the Bank, as an active participant in the bond market, carries out active trading activities in the secondary market ensuring the current market liquidity.This approach was originally based on the strategic goals of the Bank's investment activities and has always had positive results in financial terms.

## Արժեթղթերի պորտֆել (մլրդ դրամ)

## Securities Portfolio (Billion AMD)




2021թ-ի վերջին արժեթղթերի պորտֆելի կազմում շուրջ 97.5%-ը կազմել են պետական պարտատոմսերը, իսկ 2.5%-ը՝ ոչ պետական պարտատոմսերը և ՀՀ ընկերությունների բաժնետոմսերը: Պետական պարտատոմսերի կազմում ընդգրկված են նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված եվրոպարտատոմսերը, որոնց ծավալն անվանական արժեքով 2021թ-ի վերջին կազմել է 44,7 մլն ԱՄՆ դոլար կամ 21.5 մլրդ ՀՀ դրամ:

At the end of 2021, about 97.5% of the securities portfolio was government bonds, and 2.5% were non-government bonds – shares of Armenian companies. The government bonds also include Eurobonds issued by the RA Ministry of Finance, the volume of which at the end of 2021 amounted to USD 44.7 million or AMD 21.5 billion.

Ընդ որում, 2021թ-ին Բանկը 16,4 մլն ԱՄՆ դոլարով ավելացրել է ներդրումները եվրոպարտատոմսերում։ Բանկը եվրոպարտատոմսերն ակտիվորեն օգտագործում է ՎԶԵԲ-ից մինչև մեկ տարի ժամկետայնությամբ դրամային միջոցների ներգրավման համար ռեպո գործարքներում, որոնց հաշվեկշռային արժեքը 2021թ-ի վերջի դրությամբ կազմել է 11.4 մլրդ ՀՀ դրամ։

Բանկը 2021թ-ին շարունակել է իրականացնել պետական արժեթղթերով առուվաճառքի ակտիվ գործառնություններ, մասնավորապես, գնել է 77,675 մլն ՀՀ դրամի ու վաճառել 37,587 մլն ՀՀ դրամի պետական պարտատոմսեր, ինչպես նաև գնել է 5,131 մլն ՀՀ դրամի և վաճառել 5,515 մլն ՀՀ դրամի կորպորատիվ պարտատոմսեր։ Արդյունքում, Բանկը ստացել է 1,879 մլն դրամի ոչ տոկոսային եկամուտներ։

2021թ-ին արժեթղթերի պորտֆելի ընդհանուր միջին տարեկան եկամտաբերությունը (ներառյալ արժեթղթերի երկրորդային շուկայում վաճառքից ստացված եկամուտը) կազմել է 9.7%, իսկ պետական պարտատոմսերի պորտֆելի համար՝ 9.8%։ Ընդ որում, պետական պարտատոմսերի պորտֆելի տարեկան տոկոսային եկամտաբերությունը կազմել է 9.5%։

2021թ-ին արժեթղթերի պորտֆելից ստացված տոկոսային եկամուտները կազմել են շուրջ 21.9 մլրդ ՀՀ դրամ կամ Բանկի ընդհանուր տոկոսային եկամուտների 65.4%-ը։ Արժեթղթերի պորտֆելից ստացված տոկոսային եկամուտների աճը 2020թ-ի համեմատ կազմել է շուրջ 28.8%։

Բանկը մշտապես իրականացնում է պարտատոմսերի ամենօրյա գնանշումներ, որոնք արտացոլվում են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքէջում, ինչպես նաև Bloomberg և Reuters Eikon համակարգերում բացված Բանկի պաշտոնական էջերում։

At the same time, in 2021, the Bank increased its investments in Eurobonds by USD 16.4 million. The Bank actively uses Eurobonds in the case of repo transactions for attracking for up to one-year funds in the framework of the EBRD, the amount of which at the end of 2021 is AMD 11.4 billion.

In 2021, the Bank has continued to carry out active trading operations on government securities, in particular, bought AMD 77,675 million and sold AMD 37,587 million securities, and as well as bought AMD 5,131 million and sold AMD 5,515 million on corporate bonds. As a result, the Bank received non-interest income of AMD 1,879 million.

In 2021, the total yield on the securities portfolio (including income from the sale on the secondary market) was 9.7%, and for the government bond portfolio it was 9.8%. Meanwhile, the annual percentage yield of the government bond portfolio was 9.5%.

In 2021, the income received from the securities portfolio amounted to about AMD 21.9 billion, which is 65.4% of the total income of the Bank. The growth of income from the securities portfolio compared to 2020 was about 28.8%.

Quotations of bonds by the Bank are reflected on a daily basis on the official website of the Bank, as well as on the official pages of the Bank opened on Bloomberg and Reuters Eikon.

Արժեթղթերի պորտֆելից ստացված տոկոսային եկամուտ (մլրդ ՀՀ դրամ)

The dynamics of interest income from the securities portfolio (Billion AMD)




## ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## INVESTMENT SERVICES

Բանկն անընդհատ կատարելագործել և ընդլայնել է իր ներդրումային ծառայությունների փաթեթը և հաճախորդներին ներկայումս առաջարկում է արժեթղթերի բրոքերային, պահառուական, ռեեստրավարման, թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման, արժեթղթերի երկրորդային շուկայի իրացվելիության կազմակերպման, ներդրումային խորհրդատվական և այլ ծառայություններ՝ հաճախորդների հանդեպ ցուցաբերելով անհատականացված (tailor-made) մոտեցումներ։

2021թ-ին բրոքերային ծառայությունների շրջանակներում հաճախորդների հանձնարարականներով Բանկն իրականացրել է ավելի քան 11 մլրդ ՀՀ դրամի արժեթղթերի առքի/վաճառքի գործառնություններ։ Օտարերկրյա արժեթղթերով գործառնություններին բաժին է ընկել 7 մլրդ ՀՀ դրամ կամ շուրջ 63.5%։

The Bank has continuously improved, expanded its investment services package, and now offers customers brokerage, custodial, registry, securities issuance and placement, management of securities liquidation in secondary market, investment advisory services, etc. providing tailor-made approaches to customers.

In 2021, within the framework of brokerage services, the Bank carried out purchase / sale operations of securities amounting about AMD 11 billion on the receivables of clients. Foreign securities transactions amounted to AMD 7 billion or about 63.5%.

As of 31.12.2021, within the framework of the registry keeping and custody services provided by the Depository through the mediation of the Bank, the Bank maintains a register of securities of 124 issuers,

Բանկի միջնորդությամբ դեպոզիտարիայի կողմից մատուցվող ռեեստրավարման և պահառության ծառայությունների շրջանակներում 31.12.2021թ-ի դրությամբ Բանկը վարում է թվով 124 թողարկողի արժեթղթերի ռեեստր, այդ թվում՝ 18 պարտատոմսերի ռեեստր և 199 հաշվետիրոջ պահառուական հաշիվ: 31.12.2021թ-ի դրությամբ Բանկում բացված դեպո հաշիվներում հաշվառվում են հաճախորդների 70.1 մլրդ ՀՀ դրամի արժեթղթեր: Հաճախորդների կողմից պահառության հանձնված արժեթղթերը հիմնականում հանդիսանում են ամերիկյան, եվրոպական, ռուսական ու հայկական պետական և կորպորատիվ արժեթղթեր:

Շուկա ստեղծողի ծառայությունների մատուցման շրջանակներում 31.12.2021թ-ի դրությամբ Բանկը հանդիսանում է 7 թողարկողների թվով 17 պարտատոմսերի շուկա ստեղծող, որոնց գերակշիռ մասը հանդիսանում են ՀՀ առևտրային բանկերի ու ֆինանսական այլ կազմակերպությունների կողմից թողարկվող պարտատոմսեր:

Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում կարճաժամկետ դրամական շուկայում և իրացվելիության կառավարման նպատակով շուկայից ներգրավում կամ տեղական ու միջազգային գործընկերներին է տրամադրում կարճաժամկետ ֆինանսավորում՝ օգտագործելով ռեպո, սվոփ գործիքներ, միջբանկային վարկեր և այլն: Բացի այդ, Բանկն ակտիվ գործառնություններ է իրականացնում բանկերի և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների (վարկային կազմակերպությունների ու ապահովագրական, ներդրումային ընկերությունների) հետ՝ նրանց հնարավորություն ընձեռելով միջազգային տեղական և ֆինանսական շուկաներում տարբեր ֆինանսական գործիքներում ներդրումներ կատարելու համար:

as well as 18 register of bonds, 199 custody accounts. As of 31.12.2021, AMD 70.1 billion securities of customers are registered in the depo accounts opened in the Bank. Custody securities are mainly American, European, Russian and Armenian state and corporate securities.

Within the framework of providing market-maker services, as of 31.12.2021, the Bank is a market-maker of 17 bonds of 7 issuers, the majority of which are bonds issued by Armenian commercial banks and other financial organizations.

The Bank is active in the short-term money market, attracting liquidity from the market or providing short-term financing to local and international partners using repo, swap instruments, interbank loans, etc. Bisides, the Bank operates in the financial market with banks - non-bank financial institutions /credit organizations, insurance, investment companies/ providing services in Armenia and international financial markets, enabling them to invest in various financial instruments.

# ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՈՍԿՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկը շարունակել է ակտիվություն ցուցաբերել արտարժութային շուկայում՝ համագործակցելով ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան բանկերի հետ։ Բանկը գործարքներ է իրականացնում արտարժութային առևտրի համար նախատեսված էլեկտրոնային հարթակներում (իրական առաքմամբ), ինչը նպաստում է միջբանկային արտարժութային գործառնությունների իրականացման ժամանակ առաջացող ռիսկերի նվազեցմանը։ Բանկը միջբանկային և ներբանկային արտարժութային շուկայում հիմնական փոխարկելի արժույթներով իրականացրել է շուրջ 541 մլրդ ՀՀ դրամի առք ու վաճառքի, այդ թվում նաև՝ արտարժութային սվոփ գործառնություններ։

2021թ-ին Բանկի կողմից հաճախորդների հետ կնքված ոսկու ձուլակտորներով և անկանխիկ ոսկով գործառնությունների ընդհանուր ծավալը կազմել է ավելի քան 100 մլն ՀՀ դրամին համարժեք գումար։

# CURRENCY AND GOLD TRANSACTIONS

The Bank continued to be active in the foreign exchange market, cooperating with both local and foreign banks. The Bank conducts transactions on electronic platforms for foreign exchange trading (real delivery), which helps to reduce the risks arising during interbank foreign exchange transactions. The Bank carried out purchase and sale transactions of about AMD 541 billion in the main interbank foreign exchange market in the main convertible currencies, as well as foreign currency swap operations.

In 2021, the Bank carried out transactions in gold bullions and non-cash gold worth about AMD 100 million.



# ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

# FUND ATTRACTION

**Բանկի կառավարման մարմինները հատուկ ուշադրություն են դարձնում Բանկի բիզնես գործունեության զարգացման ու ընդլայնման համար մատչելի ֆինանսական ռեսուրսների ներգրավմանը:**

Բանկն իր գործունեության շրջանակում օգտվում է միջոցների ներգրավման տարբեր գործիքներից՝ հիմնված դիվերսիֆիկացման սկզբունքների վրա (ըստ արժույթի, ժամկետների, գործիքների, հաճախորդների և այլն):

Միջոցների ներգրավման հիմնական ուղղություններն են.

- իրավաբանական և ֆիզիկական անձանցից ցպահանջ ու ժամկետային ավանդների ընդունում,
- միջազգային և տեղական ֆինանսական կազմակերպություններից ծրագրային միջոցների ներգրավում,
- սեփական պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման արդյունքում ժամկետային միջոցների հավաքագրում, ինչը թույլ է տալիս Բանկին կրճատել ներգրավված միջոցների ինքնարժեքը և իջեցնել ներգրավված միջոցների վաղաժամկետ վերադարձման ռիսկը՝ ապահովելով նաև պարտապանների դիվերսիֆիկացիա,
- ՀՀ միջբանկային շուկայից միջոցների ներգրավում՝ ռեպո գործառնությունների միջոցով:

**Management of the Bank pays special attention to attracting available financial resources for developing and expanding the Bank's business activity.**

The Bank has used various instruments to attract funds based on the principles of diversification (by currency, terms, instruments, customers, etc.).

The main directions of attracting funds are:

- Attracting demand and term deposits from legal entities and individuals,
- Attracting funds from international and local financial organizations,
- Collection of term assets as by issuance and placement of own bonds, which allows the Bank to reduce the cost of the attracted funds and reduce the risk on the early repayment of the funds, ensuring the diversification of debtors.
- Attracting funds from the RA interbank market through repo and reverse repo transactions.

## ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ավանդները հանդիսանում են ֆինանսական միջոցների ներգրավման ավանդական գործիք և Բանկն իրավաբանական ու ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է հետևյալ ժամկետային ավանդատեսակները.

- Ստանդարտ ավանդ,
- Փոփոխական ավանդ,
- Կուտակային ավանդ,
- Կառուցվածքային ավանդ։

Բանկում ֆիզիկական անձանց ավանդները երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ օրենքով սահմանված չափով։

Ելնելով բիզնես մոդելի առանձնահատկությունից և զանգվածային բանկային ծառայություններ չտրամադրելու Բանկի որդեգրած քաղաքականությունից՝ Բանկը մշտապես սահմանել է ավանդի նվազագույն գումար, որը 2021թ-ի վերջի դրությամբ ՀՀ դրամով ավանդների համար կազմել է 10 մլն ՀՀ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով և եվրոյով ավանդների համար՝ համապատասխանաբար 20 հազար ԱՄՆ դոլար և 20 հազար եվրո։

## DEPOSIT ATTRACTION

Deposits are a traditional means of attracting financial resources and the Bank offers the following types of deposits to legal entities and individuals:

- Standard deposit,
- Variable deposit,
- Cumulative deposit,
- Structural deposit.

Deposits of individuals in the Bank are guaranteed by the Deposit Guarantee Fund of Armenia.

Due to the peculiarity of the business model and policy of not providing mass banking services, the Bank has always set a minimum deposit amount, which at the end of 2021 amounted to AMD 10 million for deposits in AMD, and for USD and EUR deposits respectively USD 20 thousand and EUR 20 thousand amounts.



# ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Բանկը տարեցտարի խորացնում է տեղական և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությունը և, որպես արդյունք, նոր և մատչելի վարկային լուծումներ է առաջարկում հաճախորդներին։

Ստորև ներկայացնում ենք մեր հիմնական գործընկերներին.

- ՎԶԵԲ-ի հետ համագործակցությունն ունի ավելի քան 12 տարվա պատմություն և ընդգրկում է բավականին լայն շրջանակ. ՓՄՁ վարկավորում, էներգաարդյունավետություն ու վերականգնվող էներգետիկա, առևտրի ֆինանսավորում (TFP)։ Համագործակցությունն ընդգրկում է նաև «Գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի» (GMRA) շրջանակում մինչև մեկ տարի մարման ժամկետով միջոցների ներգրավում։ Համագործակցության շրջանակում Բանկը ՎԶԵԲ-ին տրամադրում է նաև կարճաժամկետ ֆինանսավորում։

ՎԶԵԲ-ի և Բանկի միջև Առևտրի ֆինանսավորման ոլորտում ցուցաբերած արդյունավետ ու տարեցտարի զարգացող գործունեության մասին է վկայում նաև ՎԶԵԲ-ի կողմից չորս տարի անընդմեջ Բանկին՝ «Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում» մրցանակի շնորհումը։

2021թ-ին Բանկի և ՎԶԵԲ-ի միջև Արևելյան գործընկերության ՓՄՁ-ների մրցունակության ծրագրի (Եվրոպական միության (ԵՄ) աջակցությամբ) և Կանաչ տնտեսության ֆինանսավորման համար Հայաստանում էներգաարդյունավետության ծրագրի 2-րդ փուլի (Կանաչ կլիմայի հիմնադրամի աջակցությամբ) շրջանակներում կնքվել է վարկային 2 նոր պայմանագիր՝ 8 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր

# COOPERATION WITH FINANCIAL ORGANIZATIONS

Year by year, the Bank deepens the cooperation with local and international financial organizations and as a result of it offers new and affordable credit solutions to customers.

Below are the main partners of the Bank.

- The bank has more than 12 years of cooperation with the EBRD in the scope of SME lending, Energy efficiency and Renewable energy, Trade financing (TFP). The cooperation includes Global Master Repurchase Agreement (GMRA) raising funds with maturity up to one year. Also, the Bank provides short term financing to the EBRD.

Evidence of the Bank's developing and growing activities in the field of trade finance is that four years in a row, the EBRD awarded the Bank "The Most Active Issuing Bank in Armenia" prize.

In 2021 the Bank and the EBRD signed Eastern Partnership SME Competitiveness Program (SME Competitiveness Program with European Union (EU) support) and Green Economy Financing Program for Green Economy in Armenia in the second phase ("GEFF in Armenia" with the support of the Green Climate Fund (GCF)) 2 new contracts totaling USD 8 million. It should be noted that the EBRD increased the trade financing limit for the Bank from USD 6.5 million to USD 28.5 million, which is currently one of the largest limits in the Armenian banking system.

At the end of 2021, the total volume of the Bank's involvement in the EBRD programs amounted to about USD 58 million.

ծավալով: Նշենք նաև, որ ՎԶԵԲ-ը Բանկի համար առևտրի ֆինանսավորման սահմանաչափն ավելացրել է ևս 6.5 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ հասցնելով 28.5 մլն ԱՄՆ դոլարի, որը ներկայումս ՀՀ բանկային համակարգում ամենամեծ սահմանաչափերից մեկն է:

2021թ-ի վերջին ՎԶԵԲ-ի բոլոր ծրագրերով Բանկի ներգրավումների ընդհանուր ծավալը կազմել է շուրջ 58 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար:

- KfW և Եվրոպական ներդրումային բանկեր, որոնց հետ Բանկի համագործակցությունն իրականացվել է «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ պետական հիմնարկի միջոցով: Գերմանահայկական հիմնադրամի հետ համագործակցությունն ունի շուրջ 14 տարվա պատմություն: 2021թ-ի ընթացքում Բանկը համագործակցել է KfW բանկի «ՄՓՄՁ Աջակցում» վարկային ծրագրի երկրորդ փուլի, Էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի վարկային վերականգնվող էներգիայի զարգացման ծրագրի և ԵՆԲ-ի «Մասնավոր հատվածի ֆինանսավորում ՓՄՁ-ների ու միջին կապիտալիզացիայի կազմակերպությունների համար» ծրագրի 3-րդ փուլի շրջանակներում:
- ԱԶԲ-ի հետ Բանկը համագործակցում է դեռևս 2015թ-ից՝ առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակում: 2021թ-ին ԱԶԲ-ն Բանկի համար առևտրի ֆինանսավորման սահմանաչափն ավելացրել է ևս 4 մլն ԱՄՆ դոլարով՝ հասցնելով 9 մլն ԱՄՆ դոլարի: ԱԶԲ-ի կողմից առևտրի ֆինանսավորման ոլորտի նախորդ տարվա ցուցանիշների ամփոփման արդյունքում Բանկն արժանացել է առևտրի ֆինանսավորման ոլորտում 2021թ-ի «Հայաստանում առաջատար գործընկեր բանկ» մրցանակին:
- 2021թ-ին Բանկը համագործակցություն է սկսել Եվրասիական Զարգացման

- The cooperation with the KfW and European Investment Bank which was carried out by PMU GAF (Project Management Unit of German-Armenian Fund State Institution (PMU GAF). The cooperation with the GAF has more than 14 years of history. During 2021 the Bank cooperates with KfW within the scope second phase of “MSME Support” program, Energy Efficiency Program with the scope of second phase of Credit Renewable Energy Development Program and with EIB within the scope of third phase of “Private Sector Financing for Small And Medium-Sized Enterprises (SME) and Midcaps” program.
- The Bank has cooperated with the ADB since 2015 within the scope of Trade Financing program. In 2021, the ADB increased the trade finance limit for the Bank by USD 4 million to USD 9 million. As a result of summarizing the indicators of the previous year, the Bank was awarded the 2021 “Leading Partner Bank in Armenia” award by the Asian Development Bank in the field of trade financing.
- In 2021, the Bank began cooperation with the Eurasian Development Bank (EDB) for Trade finance limit of USD 5 million, which was approved by the EDB in 2022.
- “National Mortgage Company” RCO CJSC, cooperation since 2010 within the scope of mortgage loans refinancing, energy efficient renovation of residential real estate, micro financing.
- “Home for Youth” RCO CJSC, cooperation since 2013 within the framework of mortgage refinancing program provided to young families.
- In recent years, due to the active policy in the field of “Green” financing, the Bank has launched a very important

Բանկի (ԵԱԶԲ) հետ 5 մլն ԱՄՆ դոլարի չափով Առևտրի ֆինանսավորման սահմանաչափ ստանալու նպատակով, որը ԵԱԶԲ-ի կողմից հաստատվել է 2022թ-ին:

- «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ Բանկը համագործակցում է 2010թ-ից՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման, էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի և բնակարանային միկրովարկերի ծրագրերի շրջանակներում:
- «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ի հետ Բանկը համագործակցում է 2013թ-ից՝ երիտասարդ ընտանիքներին տրվող հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակում:
- Վերջին տարիներին «Կանաչ» ֆինանսավորման ոլորտում ակտիվ քաղաքականության շնորհիվ՝ Բանկը 2020թ-ից այդ ոլորտի զարգացման համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության նախաձեռնությամբ չափազանց կարևոր և առանձնահատուկ համագործակցություն է սկսել Կանաչ Կլիմայի Հիմնադրամի (GCF) հետ՝ “Scaling up green finance practices in Armenia” ծրագրի շրջանակում: Բանկը GCF-ի կողմից ընտրվել է որպես ծրագրի համակարգող կառույց: 2021թ-ի ընթացքում միջազգային հեղինակավոր խորհրդատվական ընկերությունների անմիջական մասնակցությամբ Բանկը շահառուների կարողությունների բարձրացման նպատակով կազմակերպել է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են եղել միջազգային փորձի ուսումնասիրությանը, ՀՀ-ում առկա խնդիրների բացահայտմանը և ոլորտի զարգացմանը: Միջոցառումների արդյունքներն ամփոփվել են մի շարք սեմինար քննարկումներով և մասնակիցների համար կազմակերպվել են դասընթացներ, որոնք վարել են «Կանաչ» ֆինանսավորման ոլորտի միջազգային հարուստ փորձ ունեցող փորձագետները:

and special cooperation with the Green Climate Fund (GCF) “Scaling up green finance practices in Armenia” for the development of this field in 2020 within the program. The Bank has been chosen as a project coordinating partner by GCF. In 2021, with the direct participation of reputable international consulting companies, the Bank organized a number of events aimed at increasing the capacity of beneficiaries, which were aimed at studying international experience, identifying problems in Armenia and developing the sector. The results of the events were summarized through a series of seminars and discussions, and trainings were organized for the participants, which were conducted by experts with rich international experience in the field of “Green” financing.


ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
10
Վ. ՍԱՐԳՍՅԱՆ փող.
V. SARGSYAN STR.
ARMSWISSBANK

# ՍԵՓԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ

Հանդիսանալով ՀՀ պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկայի ակտիվ մասնակիցներից՝ Բանկը 2015թ-ից նախաձեռնել է նաև սեփական պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման ծրագրերի իրականացումը։

31.12.2021թ-ի դրությամբ շրջանառության մեջ են գտնվում Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի 11 թողարկումներ։ Մանրամասները ներկայացված են ստորև.

# ISSUANCE OF OWN BONDS

Being one of the active participants of the RA Government and Corporate Securities Market, the Bank initiated also the implementation of its own bond issuance and placement since 2015.

As of 31.12.2021, 11 issues of bonds placed by the Bank are in circulation. Details are presented below.

### Բանկի կողմից թողարկված, տեղաբաշխված և մարված պարտատոմսերի նկարագիրը 31.12.2021թ-ի դրությամբ

### Description of bonds issued and placed by the Bank as of 31.12.2021

| | | Թողարկման արժույթ<br>Issue currency | Տեղաբաշխման ծավալ<br>Issue volume | Ժամկետայնություն<br>Duration | Արժեկտրոնային եկամտաբերություն<br>Coupon | Մարման ժամկետ<br>Maturity date | Անվանական արժեք<br>Nominal value |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2015 | SWISB1 | $ | 2,000,000 | 3 տարի/year | 7.50% | 16.04.2018 | 1,000 |
| | SWISB2 | $ | 3,000,000 | 4 տարի/year | 8.00% | 16.04.2019 | 1,000 |
| | SWISB3 | $ | 5,000,000 | 5 տարի/year | 8.50% | 27.04.2020 | 1,000 |
| 2017 | SWISB4 | $ | 10,000,000 | 7 տարի/year | 6.75% | 15.06.2024 | 100 |
| | SWISB5 | € | 10,000,000 | 6 տարի/year | 5.00% | 15.06.2023 | 100 |
| | SWISB6 | ֏ | 2,000,000,000 | 4 տարի/year | 12.75% | 15.06.2021 | 50,000 |
| 2018 | SWISB7 | ֏ | 3,000,000,000 | 5 տարի/year | 11.50% | 24.05.2023 | 50,000 |
| | SWISB8 | $ | 6,000,000 | 7 տարի/year | 6.50% | 23.05.2025 | 100 |
| | SWISB9 | $ | 10,000,000 | 6 տարի/year | 6.00% | 22.11.2024 | 100 |
| 2019 | SWISB7 | ֏ | 3,000,000,000 | 5 տարի/year | 11.50% | 24.05.2023 | 50,000 |
| | SWISB2A | $ | 5,000,000 | 6 տարի/year | 6.50% | 02.05.2025 | 100 |
| | SWISB2B | € | 3,000,000 | 4 տարի/year | 4.00% | 02.05.2023 | 100 |
| 2020 | SWISBC | ֏ | 10,000,000,000 | 5 տարի/year | 9.00% | 01.06.2025 | 50,000 |
| | SWISBD | $ | 10,000,000 | 6 տարի/year | 6.00% | 01.06.2026 | 100 |
| | SWISBE | € | 10,000,000 | 5 տարի/year | 3.50% | 01.06.2025 | 100 |
| | SWISBF | ֏ | 10,000,000,000 | 6 տարի/year | 8.50% | 28.09.2026 | 50,000 |

Բոլոր տեղաբաշխումների արդյունքում Բանկին հաջողվել է հավաքագրել 28 մլրդ ՀՀ դրամի, 51 մլն ԱՄՆ դոլարի և 23 մլն եվրոյի չափով դրամական միջոցներ: 31.12.2021թ-ի դրությամբ արդեն չորս թողարկումները մարված են եղել՝ 10 մլն ԱՄՆ դոլար և 2 մլրդ ՀՀ դրամ ծավալով:

2021թ-ին Բանկի կողմից մարվել է պարտատոմսերի մեկ թողարկում՝ 2 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով:

Թողարկված բոլոր պարտատոմսերը տեղաբաշխման ավարտից հետո ցուցակվել և շրջանառվում են Հայաստանի ֆոնդային բորսայում: Միաժամանակ, պարտատոմսերի իրացվելության ապահովման նպատակով Բանկն օգտվում է շուկա ստեղծողի ծառայություններից, ինչն ապահովում է Հայաստանի ֆոնդային բորսայի առևտրային նստաշրջաններում պարտատոմսերի երկկողմանի գնանշումները: Բանկի կողմից թողարկված պարտատոմսերը շուկայում հանդիսանում են ամենաիրացվելի և ամենապահանջված արժեթղթերից: Մասնավորապես՝ 2021թ-ին Բանկի կողմից թողարկված պարտատոմսերով Ֆոնդային բորսայում իրականացվել է թվով 101 գործարք՝ 919.5 մլն ՀՀ դրամ, 1.4 մլն ԱՄՆ դոլար, 409.4 հազար եվրո ծավալով:

Հատկանշական է նաև, որ շուկայում Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերն ունեն բավականին մեծ պահանջարկ, որի մասին են վկայում Ֆոնդային բորսայում պարտատոմսերի գնանշումները:

As a result of allocations, the Bank managed to raise AMD 28 billion, USD 51 million and EUR 23 million funds. As of 31.12.2021, 4 issues have been repaid amounting to USD 10 million and AMD 2 billion.

In 2021, the Bank repaid one issue of bonds with a nominal value of AMD 2 billion.

All issued bonds after the placement are listed in Armenian Stock Exchange. At the same time, in order to ensure the liquidity of the bonds, the Bank used the services of the market maker, which ensured the bilateral quotations of the bonds in the trading sessions of Armenian Stock Exchange. As a result, the bonds issued by the Bank are among the most popular and most demanded bonds on the market. In particular, in 2021, 101 deals worth USD 1.4 million, EUR 409.4 thousand, AMD 919.5 million were made at Armenian Stock Exchange with bonds issued by the Bank.

It is noteworthy that the bonds issued by the Bank are in great demand in the market, which is evidenced by the quotations of bonds on the stock exchange.

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

# FINANCIAL INDICATORS

**Բանկի կողմից ձևավորված զուտ շահույթը հիմնականում պայմանավորված է տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների աճով, որը Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տարեցտարի ընդլայնման, ակտիվացման և բարելավման արդյունք է։**

**The Bank, due to the growth of interest and non-interest income, has created a stable profit growth. The latter is the result of diversification, activation and improvement of the services provided by the Bank.**

2021թ-ին Բանկը ձևավորել է շուրջ 7.8 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ՝ 2020թ-ի ցուցանիշի համեմատությամբ գրանցելով շուրջ 29% աճ։ Շահույթի մեծությամբ Բանկը զբաղեցրել է 5-րդ տեղը 17 ՀՀ առևտրային բանկերի ցուցակում և ապահովել Բանկային համակարգի ընդհանուր շահույթի շուրջ 13.2%-ը։

In 2021, the Bank generated a net profit of about AMD 7.8 billion, which increased by about 29% compared to 2020. In terms of profit, the Bank ranked 5th among 17 commercial banks in Armenia and generated about 13.2% of Armenian banking system total profit.



ՀՀ բանկային համակարգում ROE և ROA ցուցանիշներով Բանկը մշտապես զբաղեցրել է առաջատար դիրքեր և 2021թ-ը ևս բացառություն չի եղել, մասնավորապես՝ ROE ցուցանիշը կազմել է 12.37%, իսկ ROA ցուցանիշը 1.97%: 2021թ-ին Բանկը և ROA և ROE ցուցանիշներով ՀՀ բանկային համակարգում զբաղեցրել է համապատասխանաբար 3-րդ և 6-րդ տեղերը՝ համաձայն Արմինֆո գործակալության 25.02.2022թ-ի թիվ 109 տարեկան վերլուծական հաշվետվության:

The Bank has always been in the leading position in Armenia banking system in terms of ROE and ROA and 2021 was no exception. In particular, the ROE was 12.37% and the ROA was 1.97%. In 2021, the Bank ranked 3rd and 6th in terms of ROE and ROA, respectively, according to the annual analytical report No.109, 25.02.2022 of “Arminfo” agency.

## Բանկի տարեկան շահութաբերության ցուցանիշները
## Annual profitability indicators



ՀՀ բանկային համակարգում Բանկը մշտապես առաջնային դիրք է զբաղեցնում «Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ» և «Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ» որակական ցուցանիշների մեծությամբ: Այդ առումով 2021թ-ը նույնպես բացառություն չի եղել, և բանկային համակարգում նշված ցուցանիշների գծով Բանկը զբաղեցրել է 1-ին հորիզոնականը՝ համաձայն «Արմինֆո» գործակալության 25.02.2022թ-ի թիվ 109 տարեկան վերլուծական հաշվետվության: «Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ» և «Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ» որակական ցուցանիշները 2021թ-ին կազմել են համապատասխանաբար՝ 252.0 մլն և 64.4 մլն ՀՀ դրամ, մինչդեռ ՀՀ բանկային համակարգի միջին ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 53.4 մլն և 8.6 մլն ՀՀ դրամ:

Տարիների ընթացքում շահույթի ստեղծումը և բաժնետոմսերի նոր տեղաբաշխումների միջոցով կանոնադրական կապիտալի համալրումն ապահովել են Բանկի ընդհանուր կապիտալի կայուն աճը: 2021թ-ի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը կազմում է 59.1 մլրդ ՀՀ դրամ, ինչը ՀՀ բանկային համակարգում 4-րդ ցուցանիշն է:

In Armenian banking system, the Bank has always been in the forefront with the qualitative indicators “Income per employee” and “Profit per employee” quality indicators in 2021 amounted to AMD 252.0 million and AMD 64.4 million respectively, in the case of average indicators of the Armenian banking system AMD 53.4 million and AMD 8.6 million. This tendency continued in 2021, as well and with these figures the Bank was at the first place in the banking system, according to the annual analytical report No. 109, 25.02.2022 of “Arminfo” agency.

The steady growth of profit and the replenishment of statutory capital through new shares have led to a steady increase in the total capital of the Bank. As of the end of 2021, the total capital of the Bank is AMD 59.1 billion, which is the 4th indicator in the banking system of Armenia.

**Կապիտալ**
(մլրդ դրամ)

**Capital**
(Billion AMD)



Բանկի ակտիվները նույնպես ցուցաբերել են կայուն աճի դինամիկա: 2021թ-ի վերջի դրությամբ Բանկի ակտիվները կազմել են ավելի քան 398.4 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրելով 3.2% աճ: ՀՀ բանկային համակարգում Բանկն ակտիվների մեծությամբ 6-րդն է: Ակտիվներում մշտապես գերակշռել են ներդրումներն արժեթղթերում (հիմնականում ՀՀ պետական պարտատոմսերում) և տեղաբաշխված միջոցները վարկային գործիքներում, որոնք հանդիսանում են Բանկի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրները:

Throughout its operations, the Bank's assets have also shown stable growth dynamics. At the end of 2021, the Bank's assets amounted to more than AMD 398,4 billion, which increased by 3.2% compared to the same period last year. Investments in securities (especially government bonds) and funds allocated in credit instruments have always dominated assets and are the main sources of income of the Bank.




Բանկի կողմից մատուցվող ծառայությունների ընդլայնմանը զուգահեռ կայուն կերպով աճել են նաև Բանկի պարտավորությունները, որոնց կազմի և կառուցվածքի դիվերսիֆիկացմանն ու ներգրավվող ռեսուրսների ինքնարժեքի նվազեցմանն ուղղված աշխատանքները գտնվել են Բանկի մշտական ուշա-

In parallel with the expansion of the Bank's services, the Bank's liabilities have steadily increased, and the Bank has always focused its efforts to diversify liabilities' structure and reduce the cost of attracted resources. Continuous steps have been taken to deepen existing cooperation with local and international financial institutions

դրության կենտրոնում: Ծարունակաբար քայլեր են ձեռնարկվել տեղական ու միջազգային ֆինանսական կառույցների հետ առկա համագործակցության խորացման և ֆինանսական նոր գործիքներով, այդ թվում նաև՝ պարտատոմսերի թողարկման շնորհիվ, միջոցների ներգրավման ծավալների ավելացման ուղղությամբ:

2021թ-ի վերջին Բանկի պարտավորությունները կազմել են ավելի քան 339.4 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրելով 5% աճ: ՀՀ բանկային համակարգում Բանկը պարտավորությունների մեծությամբ 6-րդն է:

and to use new financial instruments, including issuance of bonds, to increase funding volume.

At the end of 2021, the Bank's liabilities amounted to more than AMD 339.4 billion, which is an increase of 5% over the same period last year. In terms of liabilities the Bank is the 6th in the banking system of Armenia.




Ըստ 2021թ-ի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից վճարված հարկերի մեծությունների ցանկի՝ Բանկը վճարել է 2,986 մլն ՀՀ դրամի հարկեր: Բանկը զբաղեցնում է ընդհանուր ցուցակի 75-րդ, իսկ ՀՀ-ում գործող առևտրային բանկերի շրջանակում՝ 8-րդ հորիզոնականը:

According to the report list of top 1000 large taxpayers and values of taxes paid by them by the results of January-December 2021, the Bank paid AMD 2,986 million taxes. The Bank ranks 75th in the general list and the 8th among commercial banks operating in Armenia.



ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԸՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ARMSWISSBANK
PRIVATE & INVESTMENT BANKING

# ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

**Բանկը մշտապես առաջնորդվում է «Կորպորատիվ մշակույթում խոսքը գործողությունից չպետք է տարբերվի» կարգախոսով: Բանկը ճիշտ է օգտագործում ժամանակն ու ռեսուրսները և գնահատում թիմի բոլոր աշխատակիցներին:**

Մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում Բանկը մշտապես ապավինում է առաջադեմ, որակյալ և փորձառու մասնագետների ներգրավման, աշխատակիցների շարունակական վերապատրաստման, ընդհանուր զարգացման, կորպորատիվ մշակույթի տարածման ու առողջ թիմի պահպանման սկզբունքներին և մոտեցումներին:

Բանկն իր աշխատակիցների հետ փոխհարաբերությունները կառուցում է երկարատև համագործակցության և փոխադարձ հարգանքի սկզբունքով:

Գիտակցելով պրոֆեսիոնալ անձնակազմի կարևորությունը՝ Բանկը միշտ հոգացել է նրանց վերապատրաստման, խրախուսման, կարիերայի աճի, պրոֆեսիոնալիզմի բարձրացման մասին:

Բանկի աշխատակիցներն աչքի են ընկնում հմտություններով, պրոֆեսիոնալիզմով, նախաձեռնություններով և թիմային աշխատանքի ունակություններով: Բանկի բազմաթիվ աշխատակիցներ մասնակցել են ՀՀ տարածքում և դրանից դուրս կազմակերպված ուսումնական

# STAFF DEVELOPMENT

**The Bank is led with the slogan “Word should not differ from action in corporate culture.” The Bank makes use of its time and resources effieciently and highly appreciates its staff.**

In the field of human resource management the Bank has always relied on the principles of attracting advanced, qualified and experienced specialists having continuous training and development of employees strengthening corporate culture and maintaining a healthy team.

The Bank builds relationships with its employees on the principle of a long-term cooperation and mutual respect.

Realizing the importance of professional staff, the Bank has always prioritized the team training, encouragement, career growth and professionalism.

The Bank’s employees stand out for their skills, professionalism, initiatives and teamwork skills. Many employees of the Bank have participated in various educational programs organized not only in Armenia but also abroad, including seminars, conferences and online courses organized by international partner organizations to exchange with experience and knowledge.

տարբեր ծրագրերի, այդ թվում՝ սեմինարների, կոնֆերանսների և միջազգային գործընկեր կազմակերպությունների կողմից կազմակերպվող առցանց (online) դասընթացների՝ փորձի ու գիտելիքների փոխանակման նպատակով։

Տարբեր ուսումնական ծրագրերում գերազանց առաջադիմություն ցուցաբերած բազում աշխատակիցներ մասնակցել են մի շարք արտասահմանյան հեղինակավոր բանկերում և կազմակերպություններում վերապատրաստման ծրագրերի։

Մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով Բանկը մշտապես խրախուսել է աշխատակիցների մասնակցությունը ACCA, CFA և որակավորման բարձրացման միջազգային այլ հայտնի ծրագրերին, որոնց մասնակցության շնորհիվ Բանկի մի շարք աշխատակիցներին շնորհվել են ACCA և CFA որակավորումներ։

31.12.2021թ-ի դրությամբ Բանկում աշխատում է 144 աշխատակից։ Ընդ որում.

- բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն,
- 5 աշխատակից ունի գիտությունների թեկնածուի և մեկը՝ գիտությունների դոցենտի աստիճան,
